

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՔ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒԾ ԿԱՊԻԿԻ

ԾԱՂԻԿԻ ՄԱՍԻՆ



Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսից: Յուրաքանչյուր ոք, ով սերտ անձնական կապ է ունեցել կապիկի ծաղիկ ունեցող հիվանդի հետ, գտնվում է ռիսկի խմբում:

ՈՐՈՂՔ ԵՆ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԱՆՏԱՆԻՇՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՆՏԱՆԻՇՆԵՐ



ՑԱՆ

Ցանը կարող է՝

- Արտաքինից նման լինել բշտիկների, պզուկների, ուռուցքների, խոցերի կամ թեփի
- Առաջանալ մարմնի ցանկացած հատվածում, ներառյալ՝ սեռական օրգանները, հետանցքը, բերանը, ձեռքերը և դեմքը:
- Գտնվել ինչպես մարմնի մեկ մասում, այնպես էլ տարածվել ողջ մարմնով:
- Լինել քորոտ կամ ցավոտ (հատկապես բերանի խոռոչում և հետանցքում):

ԱՅԼ ԱՆՏԱՆՈՏԱՊ ԴՅՈՒՆ

ԳՐԻՊԱՆՄԱՆ ԱՆՏԱՆԻՇՆԵՐ



Ջերմություն/դող



Այտուցք ավշահանգույցներում



Հոգնածություն, մկանային ցավեր և գլխացավ

- Գրիպանման ախտանիշները կարող են ի հայտ գալ ցանի առաջանալուց 1-4 օր առաջ կամ ցանից հետո:
- Ոչ բոլորը կարող են ունենալ այս ախտանիշները:

Աշտանիշները սովորաբար սկսում են ի հայտ գալ վարակակրի հետ շփումից 5-21 օր անց

ԻՆՉՊԵՏ Ե ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Կապիկի ծաղիկով հիվանդ մարդու ցանի, վերքերի կամ մարմնի հեղուկների հետ մաշկ առ մաշկ անմիջական շփումը
- Շփումը առարկաների և գործվածքների հետ, որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկով հիվանդի կողմից
- Շփում կապիկի ծաղիկով հիվանդ անձի շնչառական արտազատուկներ հետ

Դրա առաջացման պատճառներն են՝

- Սեռական հարաբերությունները և այլ ինտիմ կապերը, ներառյալ համբուրվելը, մերսումը, գրկախառնությունը
- Չմաքրված գործվածքների և իրերի համատեղ օգտագործումը (օրինակ՝ հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ, սեքս-խաղալիքներ)
- Երկարատև, սերտ, դեմ առ դեմ շփում, ինչպես օրինակ՝ շատ մոտ տարածույթան վրա դեմ առ դեմ երկար զրույց (մոտ 3 ժամ կամ ավել)
- Կապիկի ծաղիկով հիվանդի տանը ապրելը, նրա մահճակալից օգտվելը կամ նրան խնամելը

Կապիկի ծաղիկով հիվանդ մարդը կարող է վարակել ուրիշներին՝ սկսած ախտանշանների հայտնվելու պահից մինչև ցանի բուժվելը, թեփերի թափվելը և մաշկի նոր շերտի առաջանալը: Դա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կապիկի ծաղիկ ունեցող հոդի կինը կարող է վիրուսով վարակել իր պտղին ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը ՉԻ տարածվում հիվանդի հետ սովորական զրույցների կամ նրա կողքով քայլելու միջոցով:



Գիտնականները շարունակում են ավելի ուսումնասիրել, թե ինչպես է տարածվում կապիկի ծաղիկը, այդ թվում՝

- Արդյոք վիրուսը կարող է տարածվել ախտանշանների բացակայության դեպքում,
- Որքան հաճախ է այն տարածվում շնչառական արտազատուկների միջոցով, և
- Ցանկացած այլ տեսակի շփում կամ վարքագիծ, որը կարող է մարդկանց համար վտանգը ավելի մեծացնել

ԻՆՉՊԵՍ ԽՈՒՄԱՓԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿՈՎ ԿԱՐԱԿՎԵԼՈՒՑ

1 Խուսափեք մաշկ առ մաշկ կամ երկարատև սերտ շփումից որևէ մեկի հետ, ով ունի կապիկի ծաղիկի ախտանիշներ

- Պարզապես մի դիպչեք նրանց մարմնի ցանկն կամ վերքերի կեղևին:
- Մի համբուրեք, մի գրկեք, մի գրկախառնվեք և սեռական հարաբերություն մի ունեցեք նրանց հետ (բերանային, հետանցքային, հեշտոցային):

2 Խուսափեք դիպչել կեղտոտ իրերին և նյութերին, որոնք օգտագործվել են կապիկի ծաղիկի ախտանիշներ ունեցող անձի կողմից:

- Համատեղ մի օգտագործեք մահճակալը, սրբիչները, հագուստը կամ վերմակը, եթե դրանք լվացված չեն:

3 Հաճախ լվացեք ձեռքերը:

- Ձեռքերը հաճախ լվացեք օժանոթ և ջրով կամ օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց: Դա հատկապես կարևոր է ուտելուց առաջ և զուգարանից օգտվելուց հետո: Խուսափեք չլվացված ձեռքերով ձեր դեմքին դիպչելուց:

4 Պատվաստվեք, եթե իրավասու եք:

- Կապիկի ծաղիկով վարակվելու բարձր վտանգ ունեցող մարդիկ կարող են պատվաստվել՝ նվազեցնելու վարակվելու վտանգը: Պատվաստանյութը կարող է տրամադրվել նաև այն մարդկանց, ովքեր շփվել են կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց հետ՝ օգնելու կանխարգելել կապիկի ծաղիկի տարածումը կամ այն ավելի թեթևացնել: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր բժշկին կամ այցելեք ph.lacounty.gov/monkeypox կայքը:

ԲՈՒԺՈՒՄ

Կապիկի ծաղիկով հիվանդ շատ մարդիկ հիվանդանում են վիրուսի թեթև տարբերակով և ապաքինվում են առանց որևէ հակավիրուսային բուժման: Տեկովիրիմատ (կամ TPOXX) կոչվող հակավիրուսային դեղամիջոցը կարող է նշանակվել կապիկի ծաղիկի ծանր ընթացքով տառապող մարդկանց, ներառյալ նրանց, որոնք ունեն զգայուն հատվածների ախտահարումներ կամ ցավ, որը հնարավոր չէ վերահսկել առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցներով: Այն կարող է տրվել նաև այն մարդկանց, ովքեր ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան:

ՎՏԱՆԳԸ ՆԿԱԶԵՑՆԵԼՈՒ ԱՅԼ ՌԻԴԻՆԵՐ սեռական հարաբերությունների և հասարակական միջոցառումների ընթացքում

- Սեռական զուգընկեր(ների) հետ զրուցեք ցանկացած վերջին հիվանդության և նոր կամ անբացատրելի վերքերի/ցանների մասին, ներառյալ սեռական օրգանների կամ հետանցքի վրա: Խուսափեք սեքսից կամ մաշկ առ մաշկ շփումից, եթե զուգընկերներից որևէ մեկը կապիկի ծաղիկի ախտանշաններ ունի կամ ախտորոշվել է որպես կապիկի ծաղիկով հիվանդ:
- Համատեղ մի օգտագործեք չվազված պարագաները կամ բաժակները, սրբիչները, անկողնային պարագաները կամ հագուստը:
- Օգտագործեք պահպանակ: Միայն պահպանակը բավարար չէ կապիկի ծաղիկից խուսափելու համար: Բայց դրանք կարող են նվազեցնել վտանգը և կարող են օգնել կանխել վերքերի առաջացումը մարմնի զգայուն մասերում, ինչպիսիք են հետանցքը, բերանը կամ սեռական օրգանները:
- Կրճատեք սեռական զուգընկերների քանակը:
- Խուսափեք ավելի վտանգավոր գործողություններից, ինչպիսիք են անհայտ մարդու հետ սեռական հարաբերությունները և սեքս երեկոյթները:
- Խուսափեք այցելել այնպիսի վայրեր, որտեղ մարդիկ կրում են քիչ հագուստ և որտեղ կա անմիջական, ինտիմ, մաշկ առ մաշկ շփում:
- Հանրային վայրերում ծածկեք ձեր մաշկը:

Անհապաղ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵՔ ՁԵՐ ԲԺՇԿԻ ՀԵՏ, եթե ձեր մարմնի որևէ մասում ունեք նոր, անբացատրելի, ցան կամ վերքեր: Սա հատկապես կարևոր է, եթե դուք շփվել եք որևէ մեկի հետ, ով հիվանդ է կամ կասկածում է, որ կապիկի ծաղիկ ունի:



ԵԹԵ ԴՈՒՔ ԲԺՇԿ ԶՈՒՆԵՔ՝

- **2անգահարեք Հանրային Առողջության Վարչության գանգերի կենտրոն 1-833-540-0473 հեռախոսահամարով (շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը) կամ**
- **այցելեք ձեզ մոտ գտնվող Հանրային Առողջության Վարչության սեռական առողջության կլինիկա:**

Սկանավորեք QR կոդը՝ տեղանքը գտնելու համար

